

բում աւուր ի Հալապ քաղաքն Տեառնդ մե-
 ռոյ Սրբութեանդ խոնարհեալ ընդ Մարտի-
 րոս Վարդապետի հաշտութիւն եւ խաղա-
 ղութիւն էք արարեր, եւ ի յայնմ աւուր այլ
 Ըստամպոլ եղեւ խաղաղութիւն ընդ սուրբ
 Հայրապետին ամենայն Հայոց Կաթողիկո-
 սին: Յետ այսմ խաղաղութեանցն մէկ քանի
 օր անցանելոյ՝ կրկին չարին յարուցմանց
 Ղաթրբճի Սեֆերն կու գայ Կիրիտու եւ հետն
 կու բերէ յեմր եւ պարաթ վասն մեռոնի եւ
 յԵրուսաղէմայ ըստ առաջնոյն նման: Եւ
 ժէ՛՛՛ քստակ միրիխ հախն եղեւ երկուց կող-
 մանց կրկին տարակուս. յետոյ ստեալ զյեմ-
 րըն եւ զպարաթն Խոճա Վարդանն եւ Մահ-
 տեսի Խոճա Աստուածատուրն, Խոճա Իմիր-
 զէն եւ Խոճա Խոսրովն, եկին ի յԷտրանա,
 միարանութեամբ տեսնումք թէ Ղայմախամ
 Փաշան ինչպէս ճանապարհ կու գտնէ եւ
 ցոյց կու տայ: Այս բանիս, իրաւագիտին
 յայտնի է՝ որ զԷրեանքն ճայնեցաք եւ ա-
 սացաք՝ թէ յերբ եկեալ էք աստ, եւ Ղայմա-
 խամ Փաշան պիտի մտնէք, նա՛ չի լինի թէ
 զմիմեանսզ չարաբանէք, որ այլլի կրկին
 վրդովմունք կամ խռովութիւն լինի. այն-
 քան ջանք անէք, լինի թէ զմեռոնի բանն ի
 միջէն հանէք, եւ յԵրուսաղէմ կրկին Եղիա-
 զար Հոգեւորաբիւրի անունն լինի: Խոճա Ի-
 միրզէն եւ Խոճա Խոսրովն ասացին Խոճա
 Վարդանին եւ Մատեսի Խոճա Աստուածա-
 տուրին՝ թէ յառաջ մինչեւ որ զուք չի գնաք
 ի Փաշան կամ ի Քեահանեան, նա մեք չեմք
 երթար ի Փաշան կամ Քեահանեան. ձեր զը-